ղել են մինչ սորանից 15 տարի յառաջ հանգուցեալ հիմնադիրն Երջանկայիշատակ Գէորգ Դ. բազդ ունեցաւ այս հոյակապ շինութիւնն հաստատել ի պարծանս ազգիս քաջուս հոգևորականներով և ուսուցիչներով պայծառացնել, Հայաստանեայց եկեղեցին և Ազգն. և այժմ նորին Վեհափառութիւն Տ. Տ. Մակար Կաթողիկոս ամենայն Հայոց իւր ուշադրութեան առարկայ գարձնելով օրն ազգօգուտ Հաստատութիւն, աշխատում է աւելի փառաւոր յառաջադիմութեան մէջ տեսնել յարատև, նա օրհնեալ է Աստուած որ, այս տարի ձեմարանիս աւարտողներն յանձն առին հոգևորականութիւնն, որով պիտի պսակեն թէ Երջանկայիշատակ Հիմնադրի, թէ Վեհափառ Հայրապետի և թէ համայն ազգի յոյն ու եպատակն. և օրհնեց Պ. Պ. ուսուցիչներին և աշակերտներին, ցետ որոյ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս յորդորելով զամենք յերախտագիտութիւն առ Երջանկայիշատակ Հիմնադիրն, առ Վեհափառ Հայրապետն ազգիս և առ Ազգն, կնքեց հանդէսն պահպանիչով։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԵՒՈՐ ՁԵՄԱՐԱՆԻ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1887—88 ԱՄԻ

ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ՀԱՐՔ

ԵՒ ՄԵԾԱՐԳՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Ա յսօր Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Հայոց Հոգևոր ձեմարանը տօնում է իւր չորեքտասաներորդ տարեդարձը։

Ձեմարանս իւր գոյութեամբ պարտական է Երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. ամենայն Հայոց Կաթողիկոսին, իսկ իւր շարունակութեամբ՝ մեր Աստուածարեալ Տ. Տ. Մակար Վեհափառ Հայրապետին, որ Ս. Գրիգորի՝ Հայաստանեայցս Լուսաւորչի, Գահը բազմելու օրից ի վեր ամեն տեսակ խնամք և ջանք գործ է դնում այս հաստատութիւնը իւր կոչման համապատասխան դրից մէջ պահպանելու համար։ Նորին Սուրբ Օծութիւնը Հո-

գելոյս Հայրապետից իբրև մի թանկագին աւանդ ընդունած լինելով այս բարոյականութեան և դիտութեան բարձրագոյն հիմնարկութիւնը—նորա բարեզարդութեան և յառաջադիմութեան համար նպաստող ոչ մի միջոց չէ խնայում, համաբերով իւր իմաստուն հովուապետութեան ծանր հոգսերից գլխաւորը ձեմարանիս յառաջընթաց և խաղաղ շարունակութիւնը։

Թէ՝ որքան ձեմարանիս յաջողել է արդարացնել Նորին Սրբութեան ակնկալութիւնները պարզ կերևայ այս համառօտ տեղեկագրից, որ պատիւ ունիմ առաջի առնելու Ձեր ներողամիտ ուշադրութեանը։

—

$18^{87}/_{88}$ ուս. տարին սկսուեցաւ միայն Սեպտեմբերի 21 ին, որովհետև մեծ դժուարութեամբ կարողացանք ընտրութիւն անել նորեկ աշակերտացուաց մէջ։ Մեծագոյն մասը գրեթէ միանգամայն անպատրաստ էին ներկայացել քննութեանց և՝ որ աւելի դժուարացրեց մեր գործը՝ այդ նոցա շատ տարբեր աստիճանի պատրաստութիւնն էր զանազան առարկաներից, չնայելով որ Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան կողմից շատ որոշ ծրագիր է տուած բոլոր դպրոցաց համար։ Որովհետև այս ցաւալի իրողութիւնը կրկնուեցաւ և այս տարի, ուստի պարտք ենք համարում հրապարակաւ մեր բոլոր դպրոցաց վարչութիւնների բարեմիտ ուշադրութիւնը հրաւիրելու այս խնդրի վերայ, առաջարկելով առանձին հոգ ունենալ ծրագրի ճշտիւ գործադրութեանը, որպէս զի երկդասեան դպրոցներից աւարտողները արդարև՝ առանց դժուարութեան կարող լինին ընդունուիլ ձեմարանիս երրորդ դասարանը։ Ցաւելով պէտք է աւելացնենք, որ մեր թեմական դպրոցների ստորին դասարանները և այդ կողմանէ առանձին խնամոց կարօտ են։

—

Անցեալ տարուայ սկզբին բացուեցաւ Գ. լսարանը, որ 1886 ին ժամանակաւոր փակուած էր. այնպէս որ անցեալ տարի ձեմարանս բաղկացած էր չորս դպրոցական դասարաններից՝ երրորդից սկսած՝ և երեք մասնագիտական լսարաններից, որոնց մէջ աշակերտեալները զետեղուած էին հետևեալ թուով.

Գ.	գասարանում	—	31	հոգի	Ե.	»	— 21 »
Դ.	»	—	20	»	Զ.	»	— 12 »

Ա. լսարանուհի	—	15	
Բ. »	—	7	
Գ լսարանուհի		6	
Ընդամենը		112	

Ծո–յակ ալակէբթելոյ ըսփ փեղափըռ–ըներեան.

I. ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ա ԲԵՍՍԱՐԱԲԻԱՑԻ ՎԻՃԱԿ

Քիշնեւ	1
Նոր Նախիջևան	4
Նիսոլխիա գիւղ	1
Թուիթի	1
Մեծ Սալա	1
Զլոբր	1
Օրբաղար (Արմեանակ)	1
Օդեսսա	1
	11

Բ. ԱՅԳԵՀԱՆԻ ՎԻՃԱԿ

Եկատերինոդար	1
Վլադիկավկազ	1
Ս. Խաչ	1
Նոր Արմաւիր գիւղ	1
	4

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿ

Տփխիս	2
Վարդաբլուր գիւղ	1
Գեառգեաս	1
Արտուի	1
Դիլիջան	1
Դուռնուկ	1
Ախալցխա	7
Գանձակ	1
Բանանց գիւղ	1
Սղնախ	1
Դուշէթ	1
	18

Դ. ԱՐՑԱԽԻ ՎԻՃԱԿ

Շուշի	3
Նորշէն գիւղ	1
Մարտակ	2
Նիժ	1
Վարդաշէն	3
Հաւաթիկ	1
	11

Ե. ՇԱՄԱԽԻՒ ՎԻՃԱԿ

Գիլիք գիւղ	1
	1

Զ. ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿ

Երևան	4
Ղամարլու գիւղ	1
Էրտափին	1
Քալար	1
Ալէքսանդրապօլ	6
Մեծ Ղարաքիլիսա գիւղ	1
Հին Նախիջևան	2
Նորս գիւղ	1
Ագուլիս	4
Ցղնա	2
Բռնակոթ	2
Գոքիս	1
Թլաթաղ	1
Վաղարշապատ	6
Օշական	1
Աշտարակ	1
Մարգարա	1
Իգդիր	3
Ադիաման	2
Նորաշէն	1

Բազարջուղ	1
Ղազանֆար	1
Կարս	5
	49

II. ՏԱՃԿԱՍՏԱՆ

ՏԱՃԿ - ՀԱՑԱՍՏԱՆ

Վան	1
Երզնկա	2
Սղերդ	1
Աբրան գիւղ	1
Կարուշլա	1
Ղարաբաղար	1
	7

Բ. ԱՆԱՏՈԼԻԱ

Աֆիոն - Գարահիսար	1
Քեօթայ	1
Ամասիա	1
Սեբաստիա	1
Տրապիզոն	1
	5

Գ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս	3
	3

III ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Դաւրէժ	2
	2

IV ՌՈՒՄԱՆԻԱ

Ֆոքշան	1
	1
Ընդամենը	112

Դասերի բաժանումն ըստ դասարանաց կատարուել է համաձայն դպրոցական ընդհանուր ծրագրի, բացի Զ. դասարանի մէջ նշանակուած մի արտաքոյ կարդի բնախօսութեան դասից և Գ. դասարանի բուսաբանութեան երկու դասերից, որոնք յատկացուել էին Հայաստանի աշխարհագրութեան։

Իսկ լսարանների վերաբերութեամբ ծրագիրը նշանաւոր փոփոխութեան ենթարկուեցաւ, որովհետև Գեր. Տ. Մաղաքեա Եպիսկոպոս Օրմանեանը աստուածաբանական գիտութեանց ուսուցիչ և միանգամայն քարոզիչ նշանակուեցաւ Ճեմարանում։

Մենք անհրաժեշտ պարտք ենք համարում հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու այն տոկուն և եռանդուն աշխատութեան համար, որ մեծ արդիւնաւորութեամբ կատարեց Գեր. Սրբազանը։

Լսարանների դասատուները և ամսական աշակերտավճարները

Ա. ԼՍԱՐԱՆ.

1. Բնական Աստուածաբանութիւն.	2	դաս
2. Բեմբասացութիւն	2	»
3. Քննութիւն Ս. Գրոց	3	»
4. Եկեղեց. պատմութ.	2	»
5. Բացատր. Ս. Գրոց	2	»
6. Հայոց մատենագր.	4	»
7. Ուսուցց մատենագր.	2	»
8. Ընդհանուր մատեն.	2	»
9. Մանկավարժութ.	4	»
10. Ֆրանսերէն լեզու	2	»
	25	

Բ. ԼՍԱՐԱՆ.

1. Բնական և տեսական Աստուածաբանութ.	3	»
2. Բեմբասացութիւն	2	»
3. Քննութիւն Ս. Գրոց	3	»
4. Եկեղեց. պատմութ.	2	»
5. Բացատր. Ս. Գրոց	2	»
6. Եկեղ. Մատեն. Հայոց	3	»
7. Ուսուցց մատենագր.	2	»
8. Ընդհ. մատենագր.	2	»
9. Մանկավարժութիւն	4	»
10. Ֆրանսերէն	2	»
	25	

Գ. ԼՍԱՐԱՆ.

1. Բնական, տեսական և բարոյ. Աստուածաբան.	5	»
2. Բեմբասացութիւն	2	»
3. Մեկնութ. Ս. Գրոց	2	»
4. Եկեղեց. պատմութ.	2	»
5. Բացատր. Ս. Գրոց	2	»
6. Եկեղ. մատեն. Հայոց	1	»
7. Ուսուցց մատենագր.	2	»
8. Ընդհ. մատենագր.	2	»
9. Տրամաբան. և ուսումն դաստ. անդրադարձեան	4	»
10. Ֆրանսերէն	2	»
	24	

—

Առաջի տարուայ պաշտօնեաներից թողին ձեմարանը. Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոս, Արժ. Տ. Եղիա Վարդապետ, Արժ. Վահան Վարդապետ, Գ. Պ. Նիկողայոս Խոսրովեան, Կարապետ Տ. Մկրտչեան, Մարտիրոս Հախնազարեան և Մանուկ Խաչատրեան։

Սոցա փոխարինեցին. Գեր. Տ. Մաղաքիա եպիսկոպոս, Արժ. Սահակ Վարդապետ, Գ. Պ. Յովհաննէս Սաղաթիէլեան և Գրիգոր Տ. Յարութիւնեան։

—

Դասերը բաժանուած էին աշակերտ

1. ԳԵՐ. Տ. ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ա. Ապաստաքանութիւն, (քնական, փիլիսոփայական և բարոյական)

Ա. լսարան	2	դաս
Բ. »	3	»
Գ. »	5	»

բ. Բէմ-ապատ-ին

Ա. լսարան . . 2 դաս
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »

գ. Քաղաքր-ին Ս. Գրոց.

Ա. Բ. Գ. լսարանք 2 դաս
(միացեալ)

դ. Մեկնո-ին Ս. Գրոց

Գ. լսարան . 2 դաս
20 »

2. ԱՐԺ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Քրէպոնէական Վարդապետ-ին

Ե. դասարան . 3 դաս
Զ. » . 2 »
5 »

3. Պ. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

ա. Եկել. մատենագր. Հայոց

Բ. լսարան . . 3 դաս
Գ. » . . 1 »

է. Եկեղեց. պատմ. Հայոց

Գ. դասարան . 2 դաս
Դ. » . . 2 »

գ. Տեսո-ին մատենագր.

Դ. դասարան . 2 դաս

դ. Պատմ. Մատենագր. Հայոց

Ե. դասարան . 3 դաս
Զ. » . . 3 »
Ա. լսարան . . 4 »
20

4. Պ. ՍԱՐԳԻՍ Տ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ա. Ո-ոո-ին Ս. Գրոց

Գ. դասարան . 3 դաս
Դ. » . . 3 »
Ե. » . . 2 »
Զ. » . . 2 »

բ. Քննաբան-ին Ս. Գրոց

Ա. լսարան . . 3 դաս
Բ. » . . 3 »

գ. Եկեղեցական պատմ-ին

Ա. լսարան . . 2 դաս
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »
22

5. Պ. ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆ

Ա. Տրամաբան-ին

Զ. դասարան . 4 դաս

բ. Մանկավարժ-ին

Ա. լսարան . . 4 դաս
Բ. » . . 4 »

գ. Ո-ոո-ին դասատանդ-ին

Գ. լսարան . . 4 դաս
16

6. ՍՏԵՓԱՆՈՍ ԳԱԼԱՍԱՆԵԱՆ

ա. Հայոց պատմ-ին

Դ. դասարան . 2 դաս
Ե. » . . 2 »
Զ. » . . 2 »

բ. Ֆրանսերէն լեզո-

Դ. դասարան . 4 դաս
Ե. » . . 3 »
Զ. » . . 3 »
Ա. լսարան . . 2 »
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »
22

7. Պ. ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ա. Ընդհանուր պատմ-ին

Գ. դասարան . 2 դաս

Գ. դասարան . 2 »
Ե. » . . 2 »
Զ. » . . 3 »

բ. Պատմ. Ընդհանուր մատենագրք.

Ա. լսարան . . 2 դաս
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »

գ. Պատմ. մատենագրք. Ռուսաց

Ա. լսարան . . 2 դաս
Բ. » . . 2 »
Գ. » . . 2 »
21

Պ. ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

Հայոց լեզու

Գ. դասարան . 4 դաս
Գ. » . . 4 »
Ե. » . . 3 »
Զ. » . . 3 »
14 »

9. Պ. ՅՈՎՀ. ՍԱՂԱԹԵԼԵԱՆ

ա. Ռուսաց լեզու

Գ. դասարան . 4 դաս
Դ. » . . 4 »
Ե. » . . 4 »
Զ. » . . 4 »

բ. Ռուսաց պատմություն

Ե. դասարան . 2 դաս
Զ. » . . 2 »

գ. Ռուսաստանի աշխարհագր.

Դ. դասարան . 2 դաս
22

10. Պ. Գ. Տ. ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԵԱՆ

ա. Ընդ. Աշխարհագրություն

Գ. դասարան . 4 դաս

բ. Տիեզերագրություն

Ե. դասարան . 1 դաս
5

11. Պ. ՄԻՆԱՍ ԱԶՆԱՒՈՒՐԵԱՆ

Քայնագրություն

Գ. դասարան . 5 դաս
5

12. ԱՐԵԴ. ԱԼԷՔՍԱՆԵԱՆ

ա. Աշխարհագր. Հայաստան

Գ. դասարան . 2 դաս

բ. Մաթեմատիկա

Գ. դասարան . 4 դաս
Դ. » . . 3 »
9

13. Պ. ՌՈՒԲԷՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ

Տաճկերէն լեզու

Տաճկահպատակ. համար. 6 »
6

14. ԱԲՇԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ա. Բնախօսություն

Դ. դասարան . 2 դաս
Զ. » . . 1 »

բ. Բնաբանություն

Ե. դասարան . 2 դաս
Զ. » . . 2 »

գ. Մաթեմատիկա

Ե. դասարան . 3 դաս
10

Ընդամենը 201 դաս

Սոցանից 74 դասը լսարաններում և 127 դասը դասարաններում։

Տարուայ ընթացքում բոլոր ուսուցիչները կանոնաւոր յաճախել են դասերի և բացակայութիւնները միշտ յարգելի պատճառներով են եղել. ահա և ցուցակը.

	Դասերի թիւը			
	ունեցել է	պակասել է	աւելորդ պատասխել է	ընդամենը պատասխել է
Տ. Մաղաքիա Եպիսկոպոս. . . .	488	»	2	490
» Սահակ Վարդապետ . . .	130	4	»	126
Պ. Ս. Մանգինեան . . .	393	10	»	383
» Փ. Վարդանեան	522	8	»	514
» Ս. Պալասանեան	552	»	»	552
» Կ. Կոստանեան	508	»	»	508
» Մ. Պալեան	374	17	»	327
» Ս. Տ. Գաբրիէլեան . . .	553	23	»	530
» Յ. Սաղաթէլեան . . .	567	18	»	549
» Ռ. Ռուբինեան	150	»	»	150
» Գ. Տ. Բարսեղիմէոսեան . .	131	»	10	141
» Մ. Ազնաւուրեան . . .	133	»	12	145
» Ա. Ալէքսանեան . . .	235	4	»	231
» Ա. Նահապետեան . . .	258	»	19	277
Գումար	4994	114	43	4923

Ուրեմն ընդամենը պարապ են մնացել 71 դաս, որ 100ին 1 1/2ից պակաս տոկոս է կազմում։

Մայիսին եղան հրապարակական հարցաքննութիւններ բոլոր տարրականներից երեք լսարաններում և Ջ. դասարանում. իսկ միւս դասարաններում հարցաքննութիւններ նշանակուեցան միայն այն տարրականներից, որոնց դասընթացը աւարտւում էր, աւելացնելով գրաւոր քննութիւն լեզուներից և մաթեմատիքական առարկաներից։

Գ. և Բ. լսարանների Տեսական Աստուածաբանութեան, Ա. լսարանի Բնական Աստուածաբանութեան և Ջ. դասարանի Հայոց Պատմութեան հարցաքննութիւնները բարեհաճեցաւ պատուիլ իւր բարձր ներկայութեամբ Նորին Վեհափառութիւնը։

Միաբանութեան անդամները և յաճախակի ներկայ էին լինում քննութեանց։

Ցուցակ փոխադրութեան ալեկոծելոց.

	Աւարտեցին	Փոխադրեցին	Մնացին	Արձակուեցան ըստ կամաց	Գումար
Գ. լսարան	6	»	»	»	6
Բ. »	»	7	»	»	7
Ա. »	»	10	3	2	15
Զ. դասարան	3	9	»	»	12
Ե. »	»	17	4	»	21
Դ. »	»	17	3	»	20
Գ. »	»	24	4	3	31
Գումար.	9	84	14	5	112

Ուրեմն 100ին 75 փոխադրել են, 100ին 12½ մնացել են.

—

Նորին Ս. Օծութեան Հայրապետական օրհնութեամբ այս տարի աւարտեցին իւրեանց ուսման ընթացքը Գ. լսարանից վեց հոգի.

1. Գալեմքարեան Յովհաննէս Տրապիզոնցի
2. Դալլաքեան Աստուածատուր Նիժեցի
3. Մուսաբէգեան Յովհաննէս Երևանցի
4. Յարութիւնեան Սէթ Նիովիթացի
5. Տ. Միքելեան Արշակ Շուշեցի
6. Տ. Մկրտչեան Կարապետ Յլնացի

Բարեբաղդ ենք, որ երկար տարիների մեր իղձը իրագործուած տեսնելով, այսօր հրապարակաւ աւետում ենք, որ սոցանից չորսը.

1. Դալլաքեան 3. Յարութիւնեան
2. Մուսաբէգեան 4. Տ. Մկրտչեան

Յունիսի 15ին գրաւոր կերպով դիմեցին Վեհափառ Հայրապետին, հայցելով Նորին Սրբութեան բարեհաճութիւնը ընդունելու իւրեանց ի շարս միաբանից Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

Նորին Ս. Օծութիւնը հայրագորով սիրով և Հայրապետական առատաբուղխ օրհնութեամբ բարեհաճեցաւ՝ ի ներկայութեան

Սինոդի Սրբազան անդամից՝ ընդունել սոցա խնդիրը և վստահ ենք, որ շուտով սոքա կարժանանան Ձեռնադրութեան և ճանապարհ կբանան ոչ միայն յաջորդ ուսումնասիրտներին, այլ և նախորդների համար, որոնք չդնենալով այն յաջող հանգամանքները, որ վիճակուեցաւ սոցա, անդրանկութեան պատիւը թողին այս տարուայ ուսումնասիրտներին։

—

Ձեմարանիս ուսումնական կրկնակի խորհուրդները ունեցել են 31 նիստ աշակերտելոց յառաջադիմութեան և զարգացման վերաբերեալ խնդիրների համար։ Թէև ուսումնական խորհուրդների գլխաւոր առարկաներից մինն է նաև աշակերտելոց վարք ու բարքի մասին հոգաւորութիւնը, սակայն նոցա զանցառութիւնները այն աստիճանի չեն հասած, որ խորհուրդներին դիմելու հարկ լինէր։ Մենք յորդորներով և խրատներով յաջողել ենք վերջ դնել ամեն տեսակ թերութեանց, առանց խիստ միջոցների դիմելու, ունենալով կարգապահութեան համար չորս դաստիարակ, որոնք երկու երկու հերթ են պահել օր մէջ։ Դաստիարակ եղել են. պ. պ. Գրիգոր Տ. Յարութիւնեան և երեք հոգի Ձեմարանիս նախկին ուսումնասիրտ սանտերից՝ Գէորգ Տէր Բարդուղիմէոսեան, Մինաս Ազնաւուրեան և Աբեդնագով Ալէքսանեան։

—

Անցեալ ուսումնական տարուայ ընթացքում հանդիսաւոր կերպով տօնեցինք հետևեալ եկեղեցական տօները. Առաջին Լուսաւորչաց մերոց Ս. Առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, Ս. Վարդանանց գօրավարաց և Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի։ Բացի սորանից ունեցանք ուխտ գրականական եկեղեցիներ և հինգ էլ տօնական ճառախօսութիւններ, որոնցից երեքը վերաբերում՝ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի առաջ և երկուսը միաբանութեան սեղանատանը։

Այս բոլոր հանդէսներին մասնակցել են աշակերտասէրները. ոմանք բերանացի առնախօսութեամբ, ոմանք ճառերով և ոտանաւորներով և շարադրութիւններով, թէ գրաբառ և թէ աշխարհաբառ, ոմանք ընթերցանութեամբ ընտիր ոտանաւորների և հատուածների, ոմանք էլ մեներգերով։ Մասնակցողների թիւն է. 28 ուսանողներից 22ը և 81 աշակերտներից 37ը. ընդամենը 59 հոգի։

Ս. Վարդանանց զօրավարաց տօնի հանդէսը բարեհաճեցաւ պատուել իւր բարձր ներկայութեամբ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը և ազդու խօսքերով յորդորեց ուսանողներին կուսակրօնութիւն ընդունել։

Արդէն բաղդ ունեցայ յայտարարելու, որ այս Հայրապետական բարձր հրաւէրը որդիական հնազանդութեամբ հարցաքննութիւններիդ յետոյ ընդունեցին ուսումնասիրութիւնները։

—

Աշակերտելոց կենցաղավարութիւնը նոյն ընթացքով շարունակուեցաւ, ինչպէս և առաջին տարին. այս տարի ևս Մայր եկեղեցւոյ դպրութեան գործը յանձնուած էր ամբողջապէս աշակերտասէրներին, որոնք հերթով վարում էին այդ պաշտօնը։ Սեղանը դարձեալ մնաց միաբանութեան հետ, միայն այն տարբերութեամբ որ երեկոյեան ընթրիքի ժամը փոխուեցաւ. փոխանակ 5 ին 7 ին նշանակուեցաւ ընթրիքը, որպէս զի սերտողութեան ժամերը ընթրիքից առաջ լինին, որով ամեն տեսակ անյարմարութիւններ վերջացան և աշակերտելոց ժամերի բաժանումը կանոնաւորուեցաւ։

—

Ձեմարանիս տնտեսի պաշտօնը ըստ առաջնոյն շարունակեց շնորհունակ Կիւրեղ Սարկաւագը, իսկ քարտուղարութիւնը յանձնուեցաւ Պ. Ռուբէն Ռուբինեանին։

—

Առողջապահական տեսակէտից անցեալ ուսումնական տարին շատ յաջող տարի էր. թեթև հիւանդութիւնները շատ չէին գարեցին աշակերտելոց պարապմանց, իսկ ծանր դէպքերը՝ շնորհիւ Ձեմարանիս բժիշկ Պ. Մխքայէլ Զարդարեանի հոգածողութեան՝ անվտանգ անցան։

—

Ահա մեր անցեալ $18^{87}/_{88}$ ուսումնական տարուայ գործողութեանց և Ձեմարանի ընթացքի համառօտ նկարագիրը։

Բնական էր այն փափագը, որ ամենքը սաճուած էին տեսնելու աւելի սերտ կապ միաբանութեան և Ձեմարանի մէջ։ Փառք և գոհութիւն Աստուծոյ այդ կապը այսօր ամրապնդեցաւ, երբ Ձեմարանը չորեքտասանամեայ փորձերի բովէրից անցնելով, ընծայեց իւր երախայրիքը Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Նախամեծար Աթոռին։

Ի հարկէ դժուար էր, որ ձեմարանը այն դրութեան հասցնէր, որ սորա ուսումնասէրները յօժարութեամբ դիմէին վանական կոչումն ընդունելու. քանի որ այդ կատարուած իրողութիւն է արդէն, մեզ կմնայ ամենայն վստահութեամբ գործել և սիրելի է յուսալ, որ մեր գործը, ինչ հանգամանքների մէջ էլ որ լինի ձեմարանը, յաջողութեամբ կպսակուի։

Հայցենք Ամենաբարձրեալից, որ երկարացնէ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի կեանքը, որպէս զի Նորա Հայրապետական հովանւոյ տակ, աջակցութեամբ Մայր Աթոռոյս միաբանութեան բոլոր անդամոց և օժանդակութեամբ համայն Հայոց ազգի՝ հոգևոր ձեմարանս շատ տարիներ խաղաղ և արդիւնաւոր ընթացք ունենայ։

Տէսուչ՝ Եպիսկոպոս ԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ.

1888 մայիս 24 Սեպտեմբ.
Ի Ս. Էջմիածին։

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՔ

ԵՒ

ՊԱՏՈՒԱՐԱԾԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՐՆՔ.

Այս վսեմ օրուան շքեղ հանդէսը կրկին և կրկին անգամ ապացուցանում է թէ ոքան նուիրական պիտի լինին միշտ ամէն մի անկեղծ հայի համար, ո՛րքան մօտ մեր ամենիս սրտին այս հոյակապ հաստատութեան երջանկայիշատակ հիմնադրի այն խորհուրդն ու նպատակը, որ այսօր արդէն 14 անգամ միացնում է մի այսպիսի հոգևոր գերդաստան այս պատկառելի յարկի տակ։

Ի՞նչ էր արդեօք այդ խորհուրդը. ո՞չ ապաքէն այն, որ աւանդաբար դարէ դար անցնելով հասել է մեր օրերը, որ հայի պատմական կեանքի գրեթէ մեծագոյն մասի հիմնաքարն է եղել, որով պայմանաւորուել են մեր ազգային ինքնաճանաչութեան պանծալի յաղթանակները և այն բոլորը, որով մենք այսօր մեզ իրաւունք ենք համարում պարծենալու։

Մի գաղափար, որ Լուսաւորչից սկսած՝ Մեծին Ներսիսի, Սահակայ, Մեսրոպայ և ոսկեդարու մտաւոր շարժման բոլոր առաքեալների աշխարհաշէն գործունէութեան հիմքը լինելով, ոգևորել է այնուհետև Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր սրտացաւ Հայրապետներին ու ազգի պետերին, որ փրկել է հային՝ բազդի չարաճճիների ու սոսկալի չարիքների երեսից, որ միմիայն կարողացել է մեր ազգի գոյու-